

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

26 Սեպտեմբեր, 2020-ին, յետ Խաչվերացի նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Ծայրագոյն Վարդապետական աստիճան տրուեցաւ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի շորս Հոգեշնորհ հայրերու՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեանի, Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեանի, Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեանի եւ Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանի:

Հայց. Եկեղեցւոյ «վարդապետ»-ը սկզբնական ժամանակներէն սկսեալ, միշտ ունեցած է եկեղեցական գլխաւոր առաքելութիւն եւ քարոզելու եւ ուսուցանելու պաշտօն: Եւ անշուշտ, այս առաքելութիւնը շատ լուրջ պարտաւորութիւններ կ'ենթադրէ՝ ուսումնական եւ գիտական, նկարագիր եւ առաքինութիւններ, հաւատքի կրակը դնելով իրենց ուսումին եւ ամբարուած գիտութեան մէջ: Այսպէս ընդունուած է հայ «վարդապետ»-ին եկեղեցական տիպարը:

Համաձայն եկեղեցական ծիսական դարաւոր մատեանին, այս կարեւոր պաշտօնը («վարդապետական իշխանութիւն» կամ «վարդապետական աստիճան») շնորհողը «Մեծ Վարդապետ»-ն է: Միայն ծայրագոյն վարդապետական աստիճան ունեցող եպիսկոպոս մը կրնայ վարդապետական աստիճան շնորհել ուրիշ վարդապետի մը: Ըստ Մայր Մաշտոցի բուն վարդապետը ծայրագոյն վարդապետն է:

Նախատօնակէն վերջ, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը սարկաւագներու եւ հոգեւորականներու թափօրով փոքր ատեանէն «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Տաճարի Մայր դուռը եւ բազմեցաւ Աթոռին: Ընծայեալները կը ներկայացնէր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան:

Արարողութեան մասնակից երկու խարտաւիլակներն էին՝ Հոգեշնորհ Տ. Գեղամ Ծ. Վարդապետ Զաքարեան եւ Հոգեշնորհ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեան: Պատրիարք Սրբազան Հայրը յատուկ աղօթքներու ընթերցումով տաա նոր աստիճաններ շնորհեց Տ. Ասպետ Վրդ. Պալեանի, Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեանի, Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեանի եւ Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանի:

Տըւշութենէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով շնորհընկալ Ծայրագոյն Վարդապետները, ականակուռ լանջախաչերով զարդարեց անոնց կուրծքը:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



Տ. ԱՍՊԵՏ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԵԱՆ

Աւագանի անունով Համբարձում, ծնած է 1953-ին Գամիշլի (Սուրիա):

Ընտանիքը իր մանկութեան հաստատուած է Պէյրութ, ուր եւ ան ստացած է իր նախնական ուսումը ազագոյն վարժարաններու մէջ:

1966-ին դիմած է եւ ընդունուած Պատրիարքարանիս ժառանգաւորաց Վարժարանը, որուն հնգամեայ շրջանը աւարտելէ ետք հետեւած է Ընծայարանի դասընթացքներուն եւ շրջանաւարտ եղած է 1974-ի Յունիսին:

1974 թ. Սեպտեմբեր 29-ին, Վերացման խաչի տօնին ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական:

1974-1982 թթ. դասաւանդած է ժառանգաւորաց Վարժարանէն ներս իբրեւ Գրաբարի ուսուցիչ:

1977-ին ձեռամբ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ստացած է վարդապետական չորս աստիճաններ:

1978-1982 թթ. եղած է Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման:

1980-1981 թթ. եղած է Սուրբ Աթոռոյս Մատակարար:

1983-1984 թթ. ծառայութեան կոչուած է Աւստրալիա եւ եղած է Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ:

1984-1986 թթ. եղած է Արժանթինի Առաջնորդի օգնական:

1986-2007 թթ. ԱՄՆ-ի Արեւմտեան թեմէն ներս եղած է շրջիկ հոգեւոր սպասաւոր:

1990-1992 թթ. Սաբրամենթօյի հոգեւոր հովիւն էր:

1992-1996 թթ. հոգեւոր հովիւն էր Փասատենայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ:

2008-2015 թթ. եղած է Հաղպատավանքի վանահայր:

2015-2016 թթ. եղած է Ս. Յարութեան Տաճարի փոխ-տեսուչ:

2016-էն տեսուչն է Բեթղէհէմի Ս. Ծննդեան Տաճարի:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի գիւանի, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովի անդամ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



Տ. ԲԱՐՍԵՂ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԷՄՏԵՐԵԱՆ

Աւագանի անունով Սերոբ, ծնած է 15 Օգոստոս, 1954-ին Ճըսըր Շուղուր (Սուրիա): Զաւակն է Գէորգ եւ Նուրիձա Գալէմտէրեաններու: Սկզբնական կրթութիւնը ստացած է Քեսապի Գալատուրանի Ազգային Վարժարանի նախակրթարանը:

1965-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան: 1968 Յուլիս 26-ին, ստացած է Դպրութեան չորս աստիճանները՝ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի ձեռամբ: 1974-ին կաւարտէ Ժառանգաւորաց Վարժարանը եւ յաջորդ տարւան Յունիս 28-ին Սարկաւագ կը ձեռնադրուի ձեռամբ Տ. Շահէ Արք. Աճէմեանի: 1977-ին կաւարտէ Ընծայարանի բաժինը եւ նոյն տարին, 29 Մայիսին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի կը ձեռնադրուի կուսակրօն եկեղեցական՝ վերակոչուելով Տ. Բարսեղ Աբեղայ:

1978-1980 թթ. եղած է Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի Գաւազանակիր:

1978-1991 թթ. դասաւանդած է Ժառանգաւորաց եւ Սբ. Թարգմանչաց Վարժարաններէն ներս իբրեւ Հայերէնի, Հայոց Պատմութեան, Կրօնի եւ Աշխարհագրութեան ուսուցիչ: 1979-1980 թթ. կը վարէր Սուրբ Աթոռոյս Մատակարարի պաշտօնը: 1980-էն ցայսօր Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Լուսարարան է: 1981-էն ցայսօր Գանձատան յանձնախումբի անդամ է: 1983 Մայիս 28-ին, ձեռամբ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ստացած է վարդապետական չորս աստիճաններ եւ լանջախաչ կրելու իրաւունք: 1991 Յունուար 11-ին, Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ ստացած է ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք: 1995-ին մասնակցած է Ազգային Եկեղեցական Ժողովին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու առիթով:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Հեղինակ է երկու աշխատութիւններու՝ «Հայոց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը – Երուսաղէմ» եւ «Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի»:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի Ատենադպիր ապա Ատենապետ, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովի անդամ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



Տ. ՎԱՆԻԿ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Ծնած է Պոլիս, 20 Սեպտեմբեր, 1949-ին: Նախնական կրթությունը ստացած է Շիշլիի Ազգային վարժարանին մէջ, ապա անցած է Գարագիւղի Կեդրոնական՝ եւ ատեն մըն ալ Սամաթիոյ Սահակեան-Նունեան վարժարանը, որուն 10-րդ դասարանը աւարտելէ ետք մտած է զինուորական ծառայութեան: Ատեն մը նետուած է գործի ասպարէզ:

1974-ին եկած է Երուսաղէմ եւ հետեւած Ժառանգաւորաց Վարժարանի եւ ապա Ընծայարանի դասընթացքներուն:

1977-ին ձեռնադրուած է Սարկաւագ ձեռամբ Տ. Շահէ Արք. Աճեմեանի:

1978-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ, ձեռամբ Արեւմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ ու Փարիզի Հայոց Առաջնորդ Տ. Սերովբէ Արք. Մանուկեանի:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներու ընթացքին վարած է շարք մը կարեւոր պաշտօններ: Եղած է Ս. Աթոռոյս Աւագ Թարգման, փոխ-տեսուչ Ս. Հրեշտակապետաց Վանքի, փոխ-տեսուչ Ս. Յարութեան Տաճարի, Տեսուչ՝ Կիւլպէնկեան Մատենադարանի: Երկար տարիներ եղած է Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Ժամօրհնող: Այժմ Սրբոց Յակոբեանց Տպարանի և գրատան Տեսուչն է:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



Տ. ԹԷՈԴՈՐՈՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆ

Աւագանի անունով նորայր, ծնած է 14 Դեկտեմբեր, 1969-ին, Երեւան, Հայաստան: Զաւակն է Վազգէն եւ Ասյա Զաքարեաններու:

1976-1987 թթ. սկզբնական կրթութիւնը ստացած է Երեւանի թիւ 11 միջնակարգ դըպրոցը: 1987-ին ընդունուած է Երեւանի Ճարտարագիտական Համալսարանի «Ռադիոտէխնիկայ»-ի բաժինը: Նոյն տարին զօրակոչուած է զինուորական ծառայութեան: 1990 Յունուարէն շարունակած է կիսատ ձգած ուսումը Ճարտարագիտական Համալսարանէն ներս:

1992-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան: 1993 Օգոստոսի 14-ին Սարկաւագ կը ձեռնադրուի Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռամբ: 1995-ին կ'աւարտէ Ընծայարանի քառամեայ բաժինը եւ կը ձեռնադրուի կուսակրօն եկեղեցական՝ վերակոչուելով Տ. Թէոդորոս Աբեղայ:

1996-2006 թթ. եղած է Սբ. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Տեսուչ:

2005 Յունիս 24-ին, ձեռամբ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ստացած է վարդապետական չորս աստիճաններ եւ լանջախաչ կրելու իրաւունք:

2006-2017 թթ. եղած է Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ:

2018-էն ցայժմ Մարտիկեան Թանգարանի Տեսուչն է:

2020-ի Յունուարին դարձեալ կը նշանակուի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներուն Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի Ատենապետ, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովի անդամ: Հայր Սուրբը անդամ է նաեւ Գանձատան յանձնախումբի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵՒԱՅԼՔ****ՏԱՐԵԿԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ****Ս. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՏԱՃԱՐ**

26 Օգոստոս, 2020-ին, կէս գիշերէն ետք ժամը 2:30-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայ ուխտաւորներ կատարեցին տարեկան ուխտագնացութիւն դէպի Աստուածամօր Տաճար, ուր Ս. Կոյսի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեան:

ՏԱՐԵՄՈՒՏ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ**ԸՆԾԱՅԱՐԱՆԻ**

9 Սեպտեմբեր, 2020-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 177-րդ ուսումնական տարեշրջանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ եւ ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ՝ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի: Ըստ աւանդութեան, ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեան Աւետարանէն ընթերցաւ «Սերմնացանի» առակը, ապա բարի գալուստի խօսքեր ըսաւ ներկաներուն եւ յաջողութիւն մաղթեց նոր ուսումնական տարուայ համար: Տարեմուտի արարողութեան վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան իր հայրական խրատներով քաջալերեց ժառանգաւոր սաներն ու բարի երթ մաղթեց անոնց: Իր խօսքին մէջ Սրբազան Հայրը շնորհաւորեց նաեւ ուսուցիչները եւ մաղթեց անոնց համբերատար գործունէութիւն: Հանգիստութենէն ետք Միաբանութիւնը եւ ուսուցչական կազմը պատուեցան ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչարանին մէջ:

Այս տարի ուսանողութեան թիւը 27 է: Քորոնա ժահրի ստեղծ իրավիճակին պատճառով այս տարի ժառանգաւորաց Վարժարանը նոր աշակերտներու ընդունելութիւն չունեցաւ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ**

28 Սեպտեմբեր, 2020-ին, Ս. Աթոռոյս Դիւանը հաղորդագրութիւն տարածեց նախօրէին Ատրպէյճանի կողմէ սկսած պատերազմի առնչութեամբ.

«Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը այսու կը դատապարտէ Սեպտեմբեր 27-ին, Ատրպէյճանի կողմէ Արցախի խաղաղ բնակչութեան եւ զիրքապահ զինուորներու դէմ սանձազերծած պատերազմը, որ ցարդ պատճառ դարձած է մի քանի տասնեակ խաղաղ բնակիչներու եւ զինուորներու մահուան: Յաւակցութիւն կը յայտնենք անոնց ընտանեկան պարագաներուն եւ կ'աղօթենք անոնց հոգիներու հանգստութեան համար: Կ'աղօթենք նաեւ վիրաւոր զինուորներու արագ ապաքինման համար:

Այսու, նաեւ կոչ կ'ընենք Արեւմտեան երկիրներու ղեկավարներուն, ճնշում բա-

նեցնելու Ատրպեյճանի վրայ, դադրեցնելու համար յարձակումը եւ չվտանգելու տարածաշրջանային փխրուն կայունութիւնն ու խաղաղութիւնը»,- ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԷՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՆԱՄԱԿՈՎ ԴԻՄԱԾ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱԳԱՏԻՆ

30 Սեպտեմբեր, 2020-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը նամակով դիմած է Իսրայէլի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլինի՝ կոչ ընելով դադրեցնել Իսրայէլի կողմէ Ատրպեյճանի զէնքի մատակարարումը: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան կը շեշտէ թէ ատրպեյճանական բանակը թիրախաւորած է Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչութեանը:

«Ատրպեյճանական յարձակողական գործողութիւններու հետեւանքով խաղաղ բնակչութեան եւ զինծառայողներու մէջ արձանագրուած են հարիւրաւոր զոհեր եւ վիրաւորեալներ:

Պարոն նախագահ, ցաւալի է Իսրայէլական մամուլէն իմանալ, որ ռազմական ինքնաթիռները, որոնք կ'օգտագործուին Ատրպեյճանի կողմէ, կը մատակարարէ Իսրայէլ:

Իսրայէլէն ուղարկուող սպառազինութիւնը, անօդաչու թռչող սարքերն ու հրետանին կ'օգտագործուին Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչութեան դէմ:

Նման գործելաոճը կը նշանակէ, թէ Իսրայէլ, որուն աւելի շատ խաղաղութիւն անհրաժեշտ է, խաղաղաստեղծ դիրքորոշում որդեգրելու փոխարէն, կ'օգնէ Ատրպեյճանին վերակենդանացնելու իր թշնամանքը Հայերու դէմ:

Սոյն նամակով կը դիմենք Ձերդ գերազանցութեան՝ հայցելով միջնորդել Ձեր կառավարութեան՝ դադարեցնել Ատրպեյճանին զէնքի մատակարարումը:

Դուք խաղաղասէր անձ մըն էք, եւ մին՝ ով քաջածանօթ է Հոլոքոստի եւ ջարդերու հետեւանքով իր ժողովուրդի տառապանքներուն, հետեւաբար, կ'ապաւինենք Ձեր խղճին եւ դատողութեան՝ ընելու հնարաւոր ամէն բան, որպէսզի Իսրայէլ դադրեցնէ յարձակող թշնամի Ատրպեյճանին ցուցաբերուող աջակցութիւնը»,- ըսած է Նուրհան Պատրիարք իր նամակին մէջ:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԷՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՆԱՄԱԿՈՎ ԴԻՄԱԾ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

5 Հոկտեմբեր, 2020-ի առաւօտեան, Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան նամակ յղած է Իսրայէլի վարչապետ Վսեմաշուք Տիար Պենիամին Նէթանիահուի՝ կոչ ընելով դադրեցնել Իսրայէլի կողմէ Ատրպեյճանին զէնքի վաճառքը:

Նամակէն օրինակներ զրկուած են նաեւ Իսրայէլի Պաշտպանութեան նախարար Տիար Պէննի Գանցին, Խորհրդարանի (Քնեսեթ) խօսնակ՝ Տիար Եարի Լեւինին եւ Արտաքին Գործոց նախարար՝ Տիար Կապի Աշքենազիին:

Իր նամակին մէջ Նուրհան Պատրիարք մասնաւորապէս ըսած է.

«Յաւալի է, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան խաղաղ հայ բնակչու-

Թեան դէմ Ատրպէյճանի յարձակողական քաղաքականութեանը կը մասնակցի Իսրայէլ՝ իր աջակցութեամբ: Կովկասի այս լեռնային շրջանը տասնամեակներ շարունակ եղած է անվերջ պատերազմներու գօտի Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղ-Հայաստանի միջեւ: Եւ յիշէ՛ք Պրն. Վարչապետ, որ Լեռնային Ղարաբաղը պատմականօրէն Հայաստանի մաս կը կազմէր մինչեւ այն օրը, երբ Ստալին որոշեց Նախիջեւանի հետ մէկ այլ հայկական շրջան եւս տալ Ատրպէյճանին: Մենք կը հասկնանք, որ Իսրայէլ ազնիւ եւ բարեկամական կապեր ունի Ատրպէյճանի հետ, բայց ոչ այնքան, որ յարձակողին ժամանակակից ռազմամթերք մատակարարէ՝ խրախուսելով Ատրպէյճանին խաթարել իրենց ունեցած փխրուն խաղաղութիւնը: Այնու ամենայնիւ, տարածաշրջանի մէջ պատերազմի բռնկման համար ռազմականօրէն յօգուտ Ատրպէյճանի գործելը, անշուշտ, կը վկայէ այն մասին, որ Իսրայէլ դէմ է, որպէսզի հնացած խաղաղ բանակցային գործընթացը յաջող ըլլայ: Ատկէ զատ, Իսրայէլի ներկայ դիրքորոշումը հեզնանքով ցոյց կու տայ, որ Իսրայէլ անբարենպաստ վերաբերմունք ունի Հայաստանի եւ 20-րդ դարու Առաջին ցեղասպանութիւն ապրած Հայ ժողովուրդի հանդէպ:

Անհրաժեշտութիւն չկայ յիշեցնելու Ձեզ, Պրն. Վարչապետ, Ձեր ժողովուրդի տառապանքները, ցեղասպանութեան եւ ջարդերու համակարգուած ծրագիրները: Այսօր, երկու ժողովուրդներ, մասնաւորապէս՝ Թուրքիա եւ Ատրպէյճան, կը փորձեն ջնջել հայերուն իրենց հայրենիքէն, եւ, ցաւօք, Ձեր երկիրը հանդուգն կերպով կ'օգնէ անոնց հասնիլ իրենց միասնական նպատակին: Ճիշդ է Հրեաներ կը պնդեն, թէ իրենք գոյութեան իրաւունք ունին, սակայն Ձեր երկիրը ազդուօրէն կը ժխտէ Հայերու իրաւական գոյութիւնը՝ ոչնչացնելու համար անցնելով Ատրպէյճանի կողմը: Ամէն բան յստակ է, Աստուծոյ կողմէ ընտրուած մարդիկ կը գործէն անաստուած: Ո՛ր մնաց բարոյականութիւնը: Ազգերու տնտեսական կամ սոցիալական շահերը պէտք է՝ գերակայ ըլլան ժողովուրդներէ, խիղճէ, մարդկային վերաբերմունքէ ու արդար դատողութենէ:

Ուստի, կը խնդրենք Ձեզմէ՝ որպէս բանիմաց եւ խաղաղասէր քաղաքական գործիչ, Ձեր փորձառութեամբ օգնէք խաղաղութիւն հաստատել Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան միջեւ, ոչ թէ բորբոքէք պատերազմն ու թշնամանքը այս երկու ժողովուրդներու միջեւ: Թող Ձեր խիղճը ըլլայ Ձեր դատաւորը: Մենք կը հաւատանք, որ ազնիւ եւ անկեղծ գործերը կ'արդարացնեն մեր սպասելիքները:

Մենք անկեղծօրէն կ'աղօթենք, որ խաղաղութիւն հաստատուի այստեղ՝ այս երկրին մէջ եւ արտերկրի մէջ»,- ըսած է Նուրհան Պատրիարք իր նամակին մէջ:

ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

5 Հոկտեմբեր, 2020-ին, կէսօրէ ետք ժամը 3-ին, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, յանուն Արցախի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ:

Աղօթքի ընթացքին սուրբգրային եւ Աւետարանի ընթերցուածքներով, աղօթքներով ու քարոզներով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդը աղօթեցին Մայր հայրենիքի եւ Արցախի, անոր սահմաններու անառիկութեան, Արցախի ժողովուրդի բարօրութեան, մարտնչող զինուորներու մարտունակութեան ու սխրանքներու, եւ յանուն հող-հայրենիի նահատակուածներու հոգիներու հանգստութեան համար:

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՐՑԱԽԵԱՆ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ

10 Հոկտեմբեր, 2020-ին, Վանքի մեծ բակին մէջ տեղի ունեցաւ խորհրդանշական մոմավառութիւն՝ ի յիշատակ Արցախեան պատերազմի ընթացքին արիաբար նահատակուած քաջարի հայ զինուորներու եւ քաղաքացիական զոհերու:

Մոմավառութեան ընթացքին ժառանգաւոր սաներ «Տէր ողորմեա» երգեցին, իսկ ներկաներէն իւրաքանչիւրը մէկական մոմ վառեց, որոնք կը կրէին նահատակուած զինուորներուն անունները: Վերջաւորութեան «Հայր Մեր» երգուեցաւ: Մոմերու լուսաւորութեամբ մեծ բակին կեդրոնը խորհրդանշօրէն ձեւաւորուեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան քարտէզը, որոնց սահմաններու անառիկութեան ու անսասանութեան համար հերոսաբար իրենց արիւնը թափեցին մեր հզօր ու յաղթող մատաղատի քաջերը:

ՈՒՐԱՐԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

28 Հոկտեմբեր, 2020-ին, յետ Գիշերային ժամերգութեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Ա. Ընծայարանի ուսանողներ՝ Գրիգոր Թաքուշեանի եւ Յովհաննէս Խուղապերդեանի:

Թող Ամենակալ Տէրը անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրւին նոր եւ եռանդուն մշակներ:

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿՈՂՄԷ 50 000 ԱՄՆ ՏՈՒԱՐԻ ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը «Հայաստան» Համահայկական հիմադրամի՝ Արցախի ֆոնդին փոխանցեց 50 000 ԱՄՆ տոլար:

Արցախի համար կազմակերպուած դրամահաւաքին իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամները՝ Հիմնադրամի Արցախի ֆոնդին փոխանցելով 5 256 ԱՄՆ տոլար:

Բացէ՛ք ձեր սիրտերը աներկմիտ եւ առատ, որպէսզի ձեր տուածին կարիքը խորապէս զգացող ձեր հարազատները վայելեն ձեր սէրն ու խնամքը եւ յաւերժական օրհներգուն ըլլան ձեր անուան ու յիշատակին:

Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտնեն:

ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՆԱՄԱԿՈՎ ԳԻՄԱԾ Է ՌՈՒՍԻՈՅ ՆԱԽԱԳԱՏ՝ ՎՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԱՐ ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆԻ

20 Նոյեմբեր, 2020-ին, Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան նամակով դիմած է Ռուսիոյ նախագահ՝ Վսեմաշուք Տիար Վլատիմիր Փութինի:

«Յարգարժան Նախագահ,

Կ'ողջունենք Ձեզ Սուրբ Քաղաք Երուսաղէմէն եւ Սուրբ Երկրի Տնօրինական սրբա-

վայրերէն, Ձեզ եւ Ռուս ժողովուրդին կը յղենք բիւր օրհնութիւն եւ աղօթք: Ինչպէս նաեւ կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել Ձեզ, միջնորդութեան եւ կողմերու հետ զինադադարի յայտարարութիւն ստորագրելու համար, որով դադրեցուցիք 44 օր տեւած պատերազմը՝ իր ամբողջ արհաւիրքներով:

Յարգարժան Նախագահ, ստորագրուած յայտարարութիւնը նոր իրողութիւն մը բացած է Արցախահայութեան եւ առհասարակ Հայ ժողովուրդին առջեւ: Ամենացաւալին այն է, որ Ատրպէյճանին յանձնուելիք տարածքներու մէջ պիտի մնան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դարաւոր վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր եւ այլ սրբավայրեր, որոնց պահպանութեան հարցն այսօր իւրաքանչիւր հայու համար դարձած է էական խնդիր, քանզի անոնց դէմ արդէն վանտալիզմ սկսած են: Առ այդ կը դիմենք Ձեզ, եւ կը խնդրենք, որ յառաջիկայ բանակցութիւններու ընթացքին ջանքեր գործադրէք վերոնշեալ սրբավայրերէն անոնք, որոնք հնարաւոր է, Արցախի սահմաններու մէջ ներառել, իսկ միւսներու պաշտպանութեան համար՝ ապահովել վստահելի երաշխիք: Աւելին, պատերազմի ընթացքին Արցախի պատմական շրջաններէն Հաղրութը եւ հայ ժողովուրդի մշակութային կարեւոր կեդրոններէն մին հանդիսացող Շուշի քաղաքը եւս յայտնուած են Ատրպէյճանի վերահսկողութեան տակ: Այսօր հոն բնակող տասնեակ հազարաւոր արցախցիներ անօթեւան, անտուն եւ գաղթական մնացած են: Ուստի, դարձեալ կը խնդրեմ, որ Ձեր անմիջական միջնորդութեամբ այս երկու պատմական շրջանները վերադարձուին Արցախին, որպէսզի անոնց բնակիչները վերադառնան իրենց բնակարանները եւ շարունակեն ստեղծարար եւ շինարար իրենց կեանքը:

Մեծարգոյ Տիար Նախագահ, Ձեր պաշտօնավարման տարիները կը փաստեն, որ Դուք միշտ արդարամիտ, խաղաղասէր եւ մարդասէր ղեկավար եղած էք: Այս իրողութիւնը մեզի յոյս եւ քաջութիւն կը ներշնչէ, որպէսզի շարադրենք այս խնդրանքը եւ աղօթքով ակնկալենք Ձեր դրական որոշումներուն: Աւելին, մեր վստահութիւնը կու գայ նաեւ այն բանէն, որ գրեթէ 15 տարի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը Լոյսի օրը ընդունած է Ռուսիոյ պաշտօնական պատուիրակութեան եւ անոնց մասնաւոր տեղ յատկացուցած է Սուրբ Յարութեան Տաճարի հայկական բաժնի մէջ, ինչի շնորհիւ արարողութենէն յետոյ անոնք յաջողութեամբ կարողացել են կենարար Լոյսը հասցնել Մոսկուայ, որը մեծ օրհնութեան աղբիւր է միլիոնաւոր հաւատացեալներու համար:

Կ'աղօթենք Ձեր քաջառողջութեան եւ գործերու յաջողութեան համար եւ Աստուծոմէ կը խնդրենք, որ Ձեզ, Ռուսիոյ եւ Ռուս ժողովուրդին պարգեւէ բարօրութիւն եւ արեւշատութիւն», - ըսած է Նուրհան Պատրիարք իր նամակին մէջ:

ՆՈՅՆՄԲԵՐ 22, ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ՀՀ նախագահ Տիար Արմէն Սարգսեանի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ Նոյեմբեր 22-ը յայտարարուեցաւ Արցախեան պատերազմի ընթացքին հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած հերոսներու յիշատակի օր: Որոշուեցաւ, այդ օրը հայկական բոլոր եկեղեցիներու մէջ կատարել յիշատակի արարողութիւն:

22 Նոյեմբերին, Սբ. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագեց՝ Հոգեշնորհ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեան:

Յաւարտ սուրբ պատարագի հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Արցախեան պատերազմի ընթացքին հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած հերոսներու հոգիներ:

րու համար:

Հոգեհանգստեան պաշտօն մատուցուեցաւ նաեւ օրեր առաջ Քորոնա ժահրին պատճառով վախճանած, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններէն, Գուգարաց Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արքեպիսկոպոս Զուլճեանի հոգւոյ հանգստութեան համար:

Թող Աստուած բոլոր նահատակներու եւ հանգուցեալ Սրբազան Հօր հոգիները լուսաւորէ:

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՅԱԽՃԱՊԱԿԵԱՅ ՊԱՏԿԵՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՆԱԶԱՐԷԹԻ Ս. ԱԻԵՏՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԱԻԻԹԸ

2 Դեկտեմբեր, 2020-ին, Նազարէթ քաղաքի Աւետման կաթողիկ եկեղեցւոյ գաւիթին մէջ՝ Աստուածամօր եւ Մանուկ Յիսուսի նուիրուած պատկերներու կարգին աւելցաւ նաեւ հայկականը՝ Գրիգոր Խանջեանի Աստուածամօր յախճապակեայ պատկերը՝ շրջապատուած հայ ժողովրդի խորհրդանշական եկեղեցիներով, Ծիծեռնակաբերդով, խաղողով ու նուռերով, իսկ Աստուածամօր գլխավերը պատկերուած է Բիբլիական Արարատ լեռը:

ԼԱՏԻՆԱՅ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

4 Դեկտեմբեր, 2020-ին, Երուսաղէմի նորանշանակ Լատին Պատրիարք Գերշ. Փիեռպաթիսթա Արք. Փիցաբալա կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Ս. Յարութեան Տաճար:

Յաջորդ օրը, Ս. Գերեզմանի դիմաց պատրաստուած յատուկ խորանին վրայ ան մատուց իր առաջին պատրիարքական Պատարագը:

Պաշտօնական մուտքին եւ Ս. Պատարագին Պատրիարքութեանս կողմէ ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան՝ ընկերակցութեամբ Դիւանապետ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՆ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ





ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 1 Օգոստոս.– Սրբոցն Թադէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 2 Օգոստոս.– Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 8 Օգոստոս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 9 Օգոստոս.– Գ. Կիրակի զկնի Վարդավառի: Օրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 15 Օգոստոս.– Սրբոցն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 16 Օգոստոս.– Դ. Կիրակի Վարդավառի: Օրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղան: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Յետ Ս. Պատարագի ձեռամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ առընթերակայ Հայր Սուրբերու կատարուեցաւ «Խաղողօրհնէք»-ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 17 Օգոստոս.– Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներու:

Շաբաթ, 22 Օգոստոս.– Եփեսոսի Սուրբ Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Օրուան Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կիրակի, 23 Օգոստոս.– Ե. Կիրակի Վարդավառի:

վառի: Առաւօտեան Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Ուրբաթ, 28 Օգոստոս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 29 Օգոստոս.– Տօն Շողակաթի Ս. էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. էջմիածնի: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Նկեսցէ»-ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 30 Օգոստոս.– Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց, ապա «Անդաստան»-ի արարողութեան նախագահեց Հանդիսապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 31 Օգոստոս.– Բ. օր Վերափոխման: Յիշատակ Մեռելոց: Օրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ: Պատարագեց Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, որին Հաղիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 5 Սեպտեմբեր.– է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Զա-

խակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի հորանին վրայ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 6 Սեպտեմբեր.- Ը. օր Վերափոխման: Ըստ սովորութեան, Տեսչական Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Հանդիսապետեց եւ Ս. Պատարագը մատուցեց Տ. Թէոփորոս Վրդ. Զաքարեան:

Երեկոյեան Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 8 Սեպտեմբեր.- Սրբոյն Յովակիմայ եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետեց եւ Պատարագեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 12 Սեպտեմբեր.- Սրբոյն Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 13 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն երկու օրեր առաջ Տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 19 Սեպտեմբեր.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հարիւր ութ եւ տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 20 Սեպտեմբեր.- Դ. Կիրակի զկնի Վերափոխման: Բարեկենդան հաշի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող՝ Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 26 Սեպտեմբեր.- Տօն եկեղեցւոյ ի նաւակատիւ Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Խաչվերացի մեծահանգէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրար

իարք Սրբազան Հայրը, որ ապա Ս. Խաչափայտի մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Յաւարտ նախատօնակին, ձեռամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր Ծայրագոյն Վարդապետական աստիճան տրուեցաւ Սրբոյն Յակոբեանց Միաբանական Ուխտի շորս Հոգեշնորհ անդամներու՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեանի, Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեանի, Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեանի եւ Տ. Թէոփորոս Վրդ. Զաքարեանի:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութեանց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 27 Սեպտեմբեր.- Տօն Վերացման Սրբոյն Խաչին: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէջեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանգէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 28 Սեպտեմբեր.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Յաւարտ Ս. Պատարագի, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Արցախի մէջ տեղի ունեցող պատերազմի ընթացքին զոհուած մեր 31 նահատակ հայորդիներու հոգիներուն ի հանգիստ:

Շաբաթ, 3 Հոկտեմբեր.- Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Կիրակի, 4 Հոկտեմբեր.- Բ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Ուրբաթ, 9 Հոկտեմբեր.- Քորոնա ժահրին պատճառով Ս. Գէորգայ նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 10 Հոկտեմբեր.- Սրբոյն Գէորգայ Զօրավարին, Աղոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի գաւիթը, Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշա-

փառ»-ով մոտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերմնամատրան մէջ:

Կիրակի, 11 Հոկտեմբեր.– Տօն վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Հանդիսապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 13 Հոկտեմբեր.– Սրբոց Եւստաքէոսի եւ կնոջ նորա Թէոփիստեայ եւ երկուց որդւոց եւ սրբոց Կուսանացն՝ Երմոնեայ եւ Նեկտարիւնեայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 17 Հոկտեմբեր.– Սրբոց Եօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 18 Հոկտեմբեր.– Դ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Շնորհք Արք. Պալոյեան:

Ուրբաթ, 23 Հոկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 24 Հոկտեմբեր.– Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Բրսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի անդամներուն համար կատարուած Հոգեհանգըստեան կարգին:

Կիրակի, 25 Հոկտեմբեր.– Ե. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ներսէս Արք. Ալոյեան:

Նոյն օրը կատարուեցաւ նաեւ Ռամէի Ս. Գէորգ եկեղեցւոյ տարեկան ուխտագնացութիւնը: Ժամարարն էր նոյն եկեղեցւոյ Տեսուչ՝ Տ. Գէորգ Արք. Հայրապետեան:

Շաբաթ, 31 Հոկտեմբեր.– Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ Աղոյեան: Ժամարարն էր Տ. Արշակ Արք. Ղազարեան:

Կիրակի, 1 Նոյեմբեր.– Զ. Կիրակի զկնի Խաչի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մոտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Գերաշնորհ Հանդիսապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 2 Նոյեմբեր.– Սուրբ Յովսէփայ Աստուածահօրն: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Պատարագեց Տաճարի Տեսուչ՝ Տ. Արտակ Արք. Տիւշէնեան:

Շաբաթ, 7 Նոյեմբեր.– Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մոտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, 8 Նոյեմբեր.– Է. Կիրակի զկնի Խաչի: Գիւտ Ս. Խաչի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ապա կատարուեցաւ մեծահանգէս թափօր, նախ Գիւտ Խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը գլխաւորեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ամպօղովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2020 տարուան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 14 Նոյեմբեր.– Ամենայն Սրբոց, հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 15 Նոյեմբեր.– Ը. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգէն Արք. Ալէքեան:

Ուրբաթ, 20 Նոյեմբեր.– Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 21 Նոյեմբեր.– Ս. Հրեշտակապետացն

Գաբրիելի եւ Միքայելի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Սբ. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Սբ. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 22 Նոյեմբեր.- Թ. Կիրակի զկնի խաչի: Սբ. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Արցախեան պատերազմի ընթացքին հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած հերոսներու հոգիներուն համար:

Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նաեւ Քորոնա ժահրին պատճառով վախճանած, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններէն, Գուգարաց Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Զուլճեանի հոգւոյ հանգստութեան համար:

Շաբաթ, 28 Նոյեմբեր.- . Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 29 Նոյեմբեր.- Ժ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր


վերամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր.- Նախատօնակիրն ի Սբ. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատըրիարք Սրբազան Հայրը:

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր.- Ընծայումն Սբ. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վըրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց Հանդիսապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 5 Դեկտեմբեր.- Ս. Գրիգորի Աբանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոփորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 6 Դեկտեմբեր.- Ա. Կիրակի Յիսակաց: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծունտուրեան:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Երկուշաբթի, 3 Օգոստոս.- Երեկոյեան ժամը 4-ին Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արմէն Սմբատեան ընկերակցութեամբ դեսպանատան դիւանագէտ՝ Տիար Արսէն Առաքելեանի, կատարեց իր առաջին այցը Պատրիարքարան: Պրն. Սմբատեան նախ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի, ապա Սաղիմահայ համայնքի՝ ՀԵՄ-ի, ՀՄՀՄ-ի, ԵՀԲՄ-ի միութեանց վարչականներուն հետ:

Չորեքշաբթի, 12 Օգոստոս.- Երեկոյեան ժամը 4-ին, Իսրայէլի նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ Իսրայէլի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլինի եւ Սուրբ Երկրի քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպումը: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ներկայացուց Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Յորդանան գետի ափին գտնուող վանքերու, եկեղեցիներու եւ ճամբաներու նորոգութեանց առնչուող հարցեր:

Հինգշաբթի, 27 Օգոստոս.- Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արմէն Սմբատեան ընկերակցութեամբ նորանըշանակ հիւպատոս՝ Տիկին Անի Խլղաթեանի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Պատրիարքարանի եւ դեսպանատան համագործակցութեան վերաբերեալ հարցեր:

Շաբաթ, 5 Սեպտեմբեր.- Երուսաղէմի մէջ Սպանիոյ Ընհանուր Հիւպատոս Տիար Խուան Խօսէ Էսկոպար Շտեման իր պաշտօնը ստանձնելուն

կապակցութեամբ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 11 Սեպտեմբեր.- Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան Պաղեստինեան գործերու նոր վարիչ՝ Տիար Ճորճ Նոլ իր պաշտօնը ստանցնելուն կապակցութեամբ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երեքշաբթի, 10 Նոյեմբեր.- Բեթղեհէմի Զբօսաշրջութեան նախարար Տիկին Ռուլա Մաայա այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Չորեքշաբթի, 25 Նոյեմբեր.- Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիքթորով ընկերակցութեամբ խորհրդական Դէնիս Լէպլետեի եւ դեսպանատան երկրորդ քարտուղար՝ Ալեքսանտր Կալիլովի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իսրայէլի մէջ ՀՀ դեսպան՝ Տիար Նարեկ Ղազարեան:

Երկուշաբթի, 30 Նոյեմբեր.- Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Ռենէ Թրոքազ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութեան հետ:

Շաբաթ, 12 Դեկտեմբեր.- Իսրայէլի Արտաքին գործոց նախարարութեան Կրօններու վարչութեան պետ՝ Տիար Ակիվա Տորօ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: